

մեզ զբոյս բարուց և զհակամիտութիւնս արտից մարդկան և զարարս նոցա, ճանաչել տայ մեզ զանձինս և զգուշանալ, Պատմութիւնն է՝ որ ուսուցանէ մեզ թէ այնքան հոգեկան բան մնամութեամբ զարդարեալ չքնաղ հաստուած կարող ձեռին Արարչին՝ մարդն, երջանիկ է լինթանալն զհետ օրինաց առողջ և կորովամիտ բանականութեան, և թշուառ, յորժամ երեւել կրիցն միտ զնէ միամանց, որով և յանձնիցն շարի կարգ:

(Միապէս է յերոսոստատէս):

Բ Ա Ր Ո Յ Ա Կ Ա Ն

ՍԱՆԱՏՐՈՒԿ ԹԱԳԱՒՈՐԻ ՎԱԽԱՆԵՆԸ.

(Շարունակութիւն և վերջ):

Վարապետ Պ.

(Տեսարանն ցուցանէ զանտառ, եւ ի նմին զարքայ ի յարժուն զաճաւորակի, եւ զգեաւայանն Հասմայ եւ զաւագանին. առ արքայի կան Արգամ, Երուանդ, Սոռ, Զինակիրն, Որսարեան, Կապարճակիրն, Արժունէիկն եւ Բաղէակայն, եւ այլ պրանորեարք եւ մանկրաշիկք. Երուազ կայ ի ձեռնաստանէ զարանեալ եւ սպասէ, զի շտելի լինիցին ճնշիւնք փողոց: Որսորդ շուքն եւ բարակք, եւ արժուիք եւ բազէք կան ի ձեռս որսակից իշխանայ: Ի ընդ երեսն հանդարտ եւ խոստանայ գիշեր լիալուսին):

Արքայ.

Պիտի պատմեմ ձեզ մէկ տեսիլ հրաշալի

ձայնն անայլ գիշին առաւ ծրծեցիլ.

Գունս եկաւ, մտայ սենեակ պառկեցայ,

Բայց երկիւղեւ քրնած տեղէս զարթեցայ:

Երաղիս մէջ զուստըս առիւ, կանգնեցաւ,

Բարձրարարբառ քաղցր լեզուս խօսեցաւ.

Ասաց, հայրիկ, քեզ մեծ վրտանդ կը համնի,

Քրտան տարի տարազութիւն մեր տանի:

Աչքս բացի, իմացայ որ երազ էր,

Միւս անգամ քունս աչքերուս հասել էր.

Դարձեալ տեսայ իմ սիրական Սանդուխտին,

Որ ինձ ասաց այն առաջին բան կրկին.

Եւ աւելցուց, հայրիկ, դու ինձ ասեցիր,

Բայց ես երաւ մոռացած չեմ սոս կրկիր:

Ահաարտուս ես կրկնակի զարթեցայ,

Բայց ուժգնութեամբ խմած գինւոյս քնեցայ.

Երբորդ անգամ զլոյս լուսով զարգարուած,

Դիտայն պակ յընտիր ծաղկանց բոլորուած,

Հազին կարմիր, վրէն ծածկոյթ ծիրանի,

Մատանց վերայ ականակուս մատանի,

Ոսկի մանեակ զոհար ակամբք փողփողեալ,

Վերս վերս շարիք պարանոցէն տակախալ.

Եկաւ հանդէպս և արտասուք խօսեցաւ.

Նորս ասածն սրբախ մէջը ցցուեցաւ.

Հայրիկ, ասաց, դու իմ արեւն թափեցիր,

Բայց այն արեւն կուլ չտուաւ մեր երկիր.

Անպարտ արեւան բողբ հասաւ մինչ երկինք.

Թաղէի հետ մենք Հայաստան մընացինք.

Այն արեւնը ծանրացել է քո գլխին,

Քո թաղ պիտի չուս գլորվի ի գետին.

Ձկարացիր քո հայրենեաց խնամել,

Ինչպէս զստեղ չըկամեցար խընայել:

Հայրիկ, ան մէկ եղբոր կը պաշտպանեմ,

Որ մեր տոհմի մէջ այդ թագը պահպանեմ:

Մեծ վրտանգի մէջ է այժմ քո կեանքը.

Դու լիս կարող մերժել քեզմէն փորձաբը,

Այնքան խորն ես մտել անձամբ ծով արեւան,

Որ այլ ես հընար չըկայ փրկութեան:

Դաւաճանիցդ բորբոքել ես բարկութիւն,

Ստիպել ես, որ քեզ առնեն նենգութիւն:

Ափսոս, հայրիկ, որ չեմ կարող քեզ օգնել,

Քեզմէն հարուած դաւաճանի հեռացնել.

Բայց չեմ թողուր, որ մեր տունը չքանայ,

Միւսանգամ թագը մեր տուն կըլաւուայ:

Այս որ ասաց, զաղարեց այն ձայն քաղցրիկ,

Աչքս բացի, չկայր տոջն իմ զտարիկ:

Ինձ ասացին, թէ պատրաստ են հանդերձանք,

Հեծայ միոյս, ահա ողջամբ աստ հասաւք:

Քաջք Երուանդ, ինձմէն դու մի հեռանար,

Թէ վրտանդ գայ, դու զէմ կանգնիր քաջարար.

Կրդարմանամ, ամեն կողմէն անդորր է,

Միխաղետոց մէջ խլրախն լսուած չէ:

Կողկաս, Եգեր սուս նստած են սասանած,

Պոռտուս և Կասրք մնացել են չուարած:

Արգամ.

Յաւիտեան կեաց, մեր վերահառ թագաւոր,

Արքայութիւն քո է հաստատ և հրգոր.

Ով է կարող արդ մեր վերայ արշաւել,

Մեզ մեծ Հոգմ է հալածի տարածել.

Ով քեզ ընդդէմ համարձակի հանել սուր,

Լեզէնքն պիտի տեսնէ հանդէպ իր.

Ահա Հաւումայ ամենագոր զկոպանը,

Ինչ է կարող առնել չնչին իշխանը:

Երուանդ.

Երդունամ յարեղ արքայական Սանատրուկ,

Որ յախտեան ծառայ քո եմ և ստրուկ.

Թէ յանդգնի որ ընդդէմ քո ձիկ հանել,

Իսկոյն ունիմ ի մենամարտ ելանել:
Դու քաջ գիտես, որ ես չունիմ պիտեան,
Քանի ես կամ, անվրտանդ է Հոյսատան:
Այն քոյ տեսիլ արտադրութիւն է զինւոյ,
Երեւի դեռ չես կրնասցել ի քննոյ:

Սլուկ.

Գուցէ արքայդ մրտածութեամբ է քննել:
Որ դիտոյին յաշողել է տեսանել,
Ես ես մէկ օր մեռած դուստրոս երբ տեսայ,
Նոյն ամսի մէջ կրկին դառայ նոր փեսայ:
Երբորդ հարսնս չէի տեսած մինչ այն օր,
Նոյն գիշերը հանգիւեցայ ես անոր:

Արզամ.

Ես իմ հոգին, համարիտ է ասածը,
Արքայն պիտի կատարէ իւր տեսածը:
Դիտոյի պէս մէկ օրորդ գտանեմը,
Եւ արքային նորափեսայ տեսանելը:
Երուանդ.
Մեր քաջ արանց արքայն դեռ չէ ծերացած,
Շորան շատ կեանք պիտի տեսնեք աւելցած:
Մէկ օրորդ կրճանայեմ ի Մըծրին,
Որոյ նրման կարծեմ չկայ յաշարհին,
Դուստր է մեծի նահապետին թղնունեաց,
Եւ ինքն արդէն ութնութասանց է ամաց:

Սլուկ.

Լաւ խորհուրդ է, երբ կատարի մեր սրբը,
Ինքնին կերթամ աւետուոր առ հարսը:
Արքայն պարզեւ հարսնախօսի չի խնայիւր,
Թէ չաւելնայ կալուածներս, չի պակսիւր:

Արքայ.

Սլուկ, պատրաստ է քեզ պարզեւ օրժանի:
Դու զինակիր պիտի լինիս արքայի:
Ակնարկեցեք, թող փողերը հնչեցնեն,
Երէնեւուն կապարանէն արձակեն:
(Փողերը հնչեցին, երէնեւոր սկսան այս
եւ այն կողմ վազվազել. որսն սկսաւ):

Արքայ.

Ծանրացած եմ, ես չեմ կարող հեծանել
(Գաճաւորակի վերայ կզետեղուի):

Սլուկ.

Չկարէ լուսին զտուներ ծառոց հայածել
Երուանդ.

Ահա որորդ երբ դմէ վայրի հաւ
Արզամ.

Այլ որորդ գայ ծանրաբեռնեայ եղներուաւ
(Յանկարծ նկատ եկաւ սեւեռեցաւ Սա-
նատրուկի սրտին, եւ նա գլորվեցաւ):
Երուանդ (խորժրաձայն).

Այս ինչ փորձաք, ով արձակեց նեւս վրէպ:
(Էռտեռն բազմաթիւներ սկսաւ վազել):

Սլուկ (կողկողելով).

Հայստանին հասաւ այս նոր երախեւայ:

(Բազմաթիւներ մերձեցաւ):

Արզամ (խաշով զոռայով):

Կատարուեցաւ, մեր արքայի տեսիլը:

(Բազմաթիւներ խառնիխառն կվազվազեց):

Սլուկ (կականելով).

Չուր անցաւ, մեր խրախուսանք խօսելը:

Երուանդ (նկտը քարչեց, հանեց).

Նշան կենաց չէ մնացել յարքայի:

(Բազմաթիւներ լրջապատեց):

Արզամ.

Շուտ հոգ աստիկք փառանդութեան իւր գահի:

Սլուկ (առ ժողովն).

Արքայորդոց մէջէն որուն կրկամիք:

Արզամ.

Արքայորդոց մէջը չըկան արժանիք:

Սլուկ.

Իշխանաց մէջ ով կայ գահին փառանգորդ:

Արզամ.

Կեցցէ Երուանդ, մեր արքային նոր յաջորդ:

Բազմութիւն.

Կեցցէ Երուանդ մեր նորախօսի թագաւոր:

Արզամ.

Կեցցէ Երուանդ քաջն արանց փառաւոր:

Սլուկ (Սանատրուկի քաջը դրեց Երուանդին).

Կեցցէ Երուանդ նորապսակ մեր արքայ:

Բազմութիւն.

Կեցցէ Երուանդ կանգնել յոտին զտուն Հայկայ:

Դիւսպան (Երուանդին).

Ինձ Սանատրուկ խոտացել էր կալուածներ:

Երուանդ.

Ինձ այժմ օգնէ, քեզ կան անհուն պարգևներ:

Դիւսպան.

Կեցցէ Երուանդ Հոռվոյ գահին բարեկամ:

Նորա պաշտպան է մեր արքայն բարեխնամ:

Հեղինակ իրաւունքն. Բաբելոն-Բեւայ Լ. Վա-
հագնէ Խաչատրեանց ի Չիւրախեւ, Լ. Հրաշե-
րէն Վարդանայ Մանգինէն, ի լոյս ընթացեալ
ՅԱՐԱՐԱՐՈՒ Ս. ԵՎԷԻՆԻՆԻ, Լ. ՍԵՂԻՆ:

Ա. Զ. Գ. Ա. Յ. Ի. Ն.

ԲԱՐԵՊ. ԵՂԻՍԱԲԻԹ ԴԱԻԹԵԱՆ.

Բարեպաշտուհի Եղիսաբէթ պրի Տի-
կին Գաւթնան Արձկանեանց՝ առաւել
քան զհաղորդ ուրբին արժողութեամբ
մի տուն ընծայեց Գլխարու Հայոց օրի-
որդաց հոգևոր զպրոցին:

Եւրանի՝ այնմ՝ որոյ գործոց արդիւնք առաքինական են և աղքատութեամբ ինչպէս է սոյն Տիկնոջ ընծայն, որով թէ ինքեան և թէ Կաթիկոսանց տոհմին անուանք անմահ և յիշատակք փառաւոր կմնան մերադնեայ մանկաւոյն սրտից մէջ, և նոցա օրհնութիւնքը և աղօթքները կընդունին:

Եյս առթիւ պարտք կհամարիմք և մեզ՝ հրապարակաւ շնորհակալութիւն մատուցանել Բարեպ. Եղիսարէթ Տիկնոջ՝ գովելով նորա բարի եռանդը և առաքինագործութիւնը:

Ն Ո Ւ Է Ր.

Բարեկր. Մեսրոպ քահանայ Փափազեանց 50 օրինակ Հրահանգ Վերականգնութեան նուիրեց յօգուտ նորաշէն ձեմարանի Մայր Եթոռոյս:

Շնորհակալութիւն կյայտենիմք յիշեալ քահանային:

ԵՐԵՄԻԱ ՆՈՐԱՊԵՍԱԿ ԷՊԻՍԿՈՊՈՍ.

Վ. Է. Հայրապետ յՑն ամսոյս Եպիսկոպոս ձեռնադրեց զԵրեմիա վարդապետ Տէր Սահակեանց՝ որ Ս. Երուսաղեմի միաբան լինելով՝ չորս տարիէ ի վեր ի Ռուսաստան և ի Պարսկաստան նպաստ հաւաքեց Ս. Երուսաղեմի համար, և զրեւթէ ամեն տեղ ժողովրդեան համակրութիւնքը և յորդանքը զրաւած էր իւր բարեհամբոյր վարուք և արժանաւայել ընթացիւք ի մտնութարութիւն ժողովր-

դեան. ուստի իրաւամբ արժանի հանգիսացաւ Եպիսկոպոսական բարձր աստիճանին:

ՆԵՐՍԷՍ Ս. ԵՊԻՍԿՈՊՈՍ.

Գ. Եր. Երսէս Ս. Եպիսկոպոս Վարժապետեան ստիպեալ անձնական տկարութենէն և ներկայ տարւոյս երկրի բերոց նուաղութենէն և վաճառականութեան անյաջողութենէ՝ պարտաւորեցաւ առժամանակ ինչ գաղարեցուցանել Սամաթիոյ Ս. Գէորգ Եկեղեցւոյ շէնութեան համար նպաստ հաւաքելը և հրամանաւ Վ. Է. Հայրապետի աստի մեկնեցաւ ի 15-ն ամսոյս վերադառնալ ի Ս. Պօլէս:

Նորին Գերապատուութեան հետ ուղեորեցաւ աստի և Գ. Եր. Երեմիա նորապսակ Եպիսկոպոսն:

Մ. ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼԵԱՆԻ ՆՈՒԷՐ.

Երբեմն Մայր Եթոռոյս Դառանգ. Ուսումնարանի երաժշտութեան զաստուտ տիրացու Մ. Կարապետ Առաքելեան Կ. Պօլսեցի՝ քսան և մի հատ կանթեղաց պղնձեայ թափցու գունտեր հանդերձ ամենայն պարագայիւքն ընծայեց Տաճարիս սրբոյ Եջմիածնի ի յիշատակ հոգւոյ հանգուցեալ բարեպաշտ քեռն իւրոյ:

Շնորհակալութիւն կմատուցանիմք յիշեալ ջերմեռանդ և եկեղեցական ժամերգութեանց քաջահմուտ Վարժապետին Առաքելեանց, և մաղթեմք ի Տառնէ լուսաւորել զհոգի հանգուցելոյն և